ConverseBank

«06» 04 2022

№ CONO/0522

Հավելված 5.2
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով
հրատապ բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N CONO/0522
(կանխավճարի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Ջրային կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա-1 «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ» (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 10,278,747.00 /տասը միլիոն երկու հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Սույն երաշխիքով պահանջ կարող է ներկայացվել Բենեֆիցիարի կողմից կանխավճարի գումարը պրինցիպալի՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում սպասարկվող թիվ 19300650372900 հաշվարկային հաշվին փոխանցելու պահից: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը ուժի մեջ է մտնում թողարկման օրվանից և գործում է մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 18.05.2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 26/1
Հեռ.՝ (+374 10) 511 211, Ֆաքս՝ (+374 10) 511 212
www.conversebank.am

"Converse Bank" CJSC
26/1, V. Sargsyan str., Yerevan 0010, RA
Tel.: (+374 10) 511 211, Fax: (+374 10) 511 212
www.conversebank.am

9073

038610

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքի տրամադրման օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում նշված՝ քարտուղարի (գնումները համակարգողի) էլեկտրոնային փոստի հասցեին:

Հարգանքով՝

Իրավասու անձ

Վարկային գործառնությունների պետ
Head of Credit Operations
Արշակ Խոջայան
Arshak Khojayan
ստորագրություն
signature

Կատարող՝Գ.Մովսեսյան/հեռ;511211/ներքին2381